# ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԱՐԴԳԷՍ ԱՐԾՐՈՒՆԻ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մեծարգոյ պրն. Արծրունի,

Ուրախութիւն է Հայրապետիս համար Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքը յղել Ձեզ՝ սիրելի զաւակիդ հաւատաւոր մեր ժողովրդի:

Ճանաչում ենք Ձեզ վաղուց Հայաստանում Ձեր գործունէութեան տարիներից: Երկար տարիներ վարչական պատասխանատու պաշտօններ վարելով Կառավարութեան կազմում՝ Դուք արդիւնաւորութեամբ նպաստեցիք Հայաստանում քաղաքաշինութեան բնագաւառի զարգացմանը եւ մեր Երկրի առաջընթացին: 88-եան աւերիչ երկրաշարժի օրերին՝ ի նպաստ երկրաշարժից տուժած հայորդիներին անհրաժեշտ օգնութիւն ցուցաբերելու գործի, Դուք ներդրեցիք Ձեր փորձառութիւնն ու մասնագիտական ողջ կարողութիւնները՝ անյոգնաբանեկ աշխատանքով աւանդ բերելով մեծ աղէտի հետեւանքների վերացմանը:

Այսօր առիթ ունենք գնահատանքով անդրադառնալու, որ բազմաբեղուն գործունէութիւն ծաւալելով Ռուսաստանի Դաշնութիւնում, Դուք բարեսիրական տարբեր ծրագրերի իրականացումով շարունակում էք Ձեր օժանդակութիւնը մեր Հայրենիքին՝ յանուն մեր ժողովրդի առաւել բարօր ու բարգաւաճ կեանքի:

Դուք գովարժան ծառայութիւն էք մատուցում նաեւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց Տիրախնամ թեմին, յետամուտ լինելով, որ մեր Սուրբ Եկեղեցու առաջնորդութեամբ անխափան լինի Ռուսաստանում բնակեալ հայորդեաց հոգեւոր ու ազգային կեանքը՝ հաստատուած մեր հայրերի հաւատի ամուր վէմի վրայ: Մեզ համար գոհունակութիւն է, որ Ձեր հաւատքն առ Աստուած եւ նուիրումը առ մեր Սուրբ Եկեղեցին արտայայտեցիք նաեւ Տիրախնամ թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը բերած մեծագումար նուիրատուութեամբ: Փառաբանական աղօթքն է Մեր հոգում, որ առ Աստուած ենք բարձրացնում Ձեր եկեղեցասիրութեան ու ազգասիրութեան համար:

Ի գնահատութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր օգտաշատ ծառայութեանց, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ Հայրապետական Մեր աղօթքով ի խորոց

սրտի Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ենք հայցում Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին եւ մաղթում նորանոր յաջողութիւններ Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ գործերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 769